ԽԱՉԻԿ ԲԱՂԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ԵՐԳԻ ՄԱՇՏՈՑՆ ՈՒ ՆՐԱ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

«Սողոմոն նախախնամութեան ընծան եղաւ Սուրբ Էջմիածնին:
Կոմիտաս վարդապետ Սուրբ Էջմիածնի ընծան հանդիսացաւ
հայ ժողովուրդին»:
/Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի կոնդակից/

Եւ իսկապես, Էջմիածինը եղավ այն սրբազան կրթօջախը, որը ոչ միայն կրթություն տվեց Անապատների խորքերից եկած թրքախոս դասներկուամյա հայ պատանյակին, այլեւ ձեւավորեց նրա մատաղ հոգին, կատարելագործեց նրա ապրվածատուր շնորհքը, քաղցրահնչյուն ձայնն ու նրբանուրբ լսողությունը, այստեղ նա առնչվեց հայոց հինավուրց պատմությանն ու մշակույթին եւ իր ամբողջ կյանքը նվիրեց իր ժողովրդի երգարվեստին ու այն աշխարհով մեկ տարածելու սրբազան գործին:

«Մայր աթոռոյ Հոգեւոր դպրոցը ուսման տարիներու ընթացքին լոյս եւ ձեւ տուաւ անոր մտքին, հոգիին, եւ աճեցուց անոր շնորհները Փրկչի իջման սեղանի ահեղ զօրութեամբ»,- գրում է Վեհափառ Հայրապետը Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված իր կոնդակում:

Եւ վանքն ու ճեմարանը եղան հայ երգարվեստի անխոնջ մշակի եւ ազգային երաժշտության եռանդուն սերմնացանի ստեղծագործությունների դարբնոցը: Իր կյանքի լավագույն քսան արգասավոր տարիները Կոմիտասն անցկացրեց իր սիրելի ու պաշտելի Արարատյան դաշտում, որտեղ Մայր Աթոռն ու Գեւորգյան ճեմարանը լիցք տվեցին նրան. այստեղ նա դարձավ հայ երգարվեստի Մեսրոպ Մաշտոցը:

Նորից կարդանք Վազգեն Վեհափառի խոսքը.

«Կոմիտաս վարդապետ բարենորոգիչ է հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան եւ գիւտարարը, որուն գործը կարելի է արժեւորել միայն մեսրոպեան չափանիշով: Հազար հինգ հարիւր տարիներ յետոյ Կոմիտաս վարդապետ եկաւ շարունակելու Օշականի Մեծ Վարդապետին գործը՝ երգին անդասապանին մէջ՝ վանդի երգը խօսքի շարունակութիւնն է եւ պայծառակերպումը անոր»:

Կոմիտասին իր էությամբ ու արարչագործությամբ շատերն են համեմատել Մաշտոցի ու Նարեկացու, Շնորհալու ու Աբովյանի հետ, որոնք լուսավոր հետք են թողել հայ ժողովրդի կյանքի ու մշակույթի մեջ:

«Մեծն Կոմիտասը՝ հայ երաժշտության Նարեկացին ու Աբովյանը, այրվեց իր իսկ արծարծած կրակի մեջ»,- գրում է Դ. Դեմիրճյանը:

Ամբողջ կյանքում «կոմիտասասիրահարվածությամբ տառապող» (իր բառերն են – Խ.Բ.) Պարույր Սեւակի հետեւյալ խոսքերը ամենաբնութագրականն են «ամենաբախտավոր ու ամենադժբախտ ապրողի տակ ծնված» այդ մարդակերպ ոգի-հանճարի էությունը բնութագրելու համար.

Դու Ամենայն Հայոց երգի վեհափառն ես…
Դու մեր երգի Մեսրոպ Մաշտոց.
Գիրն ու տառն ես Հայոց երգի:

Մեծ բնապաշտ Հ. Շիրազը ապտվածացնում է Կոմիտաս վարդապետին՝ նրան նմանեցնելով այն փութաջան ու աշխատասեր մեղվին, որը հազարերանգ ծաղիկներից երգեր քամեց. «Կոմիտասն ինքը հայ ժողովուրդն է: Մեղվի պես նա տուն էր բերում մեր գեղջուկ երգերի նեկտարն ու անշոշափելի մանանան: Կոմիտասն իր հանճարով ոսկե մեղվի նման հավաքեց հայ ժողովրդի բազմադարյան երգերի նեկտարը, եւ համաշխարհային երաժշտական աշխարհում աղոթքի արժանացավ Կոմիտասի անունով հայ ժողովրդի անունը»:

«Խաղ կանչող» մեծ վարդապետը (այդպես էին նրան կոչում շինականները – Խ.Բ.) իր ապտվածաշնորհ տաղանդով Արագածի ու Արարատի բարձունքների վրա, Լոռու սարերի ու Սիփանի ձյունապատ գագաթների վրա կյանք առած երգերը հավաքեց ու դաշնակելով նրանց տվեց դասական երաժշտության վայելչություն»,- գրում է երաժշտագետ Թ.Երլեմեզյանը:

Կոմիտասը եղավ հայ երգի հովիվն ու առաքյալը, շրջեց հայաբնակ գյուղերն ու ավանները (թե՛ Հայաստանում եւ թե՛ Հայաստանից դուրս), մտավ «մթնում կորած խրճիթները», տեսավ անհրապույր սեւ, բայց հյուրընկալ պատերը, թափանցեց շինականի հոգու նվիրական խորքերը, լսեց ու գրի առավ հազարամյա գոհարները, իմաստավորեց դրանք ու մաքրեց օտարաբանություններից եւ որպես բյուրեղացած ադամանդներ, նորից ժողովրդին վերադարձրեց՝ «Ձքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ»:

Նա իր հավաքած ու դաշնակած երգերը սփռեց աշխարհի բազմաթիվ երկրներում՝ հային ցույց տալով իր իսկ ստեղծած երգի նրբությունն ու քաղցրությունը, իսկ օտարին ապացուցելով հայ երգի՝ իր ժողովրդի նման բնիկ ու հինավուրց լինելը:

Նշենք այն քաղաքները, որտեղ Կոմիտասը ցուցադրել է հայ երգը. Բեռլին, Փարիզ, Ցյուրիխ, Ժնեւ, Լոզան, Բեռն, Պոլիս, Վենետիկ, Կահիրե, Ալեքսանդրիա, Իզմիր, Ատրաբազար, Էսկիշեհիր, Աֆիոն-Գարահիսար, Զմյուռնիա, Քոթահիա, Արմաշ, Թիֆլիս, Բաքու, Բաթում, Իգդիր, Ադանա, Տիգրանակերտ, Հայաստանում՝ Էջմիածին, Երեւան, Բյուրական, Ապարան, Շիրակ, Գավառ, Լոռի… Սա է Կոմիտաս վարդապետի համերգային շրջագայությունների, երգերի հավաքման ու տարածման աշխարհագրությունը՝ ոչ ամբողջությամբ:

Ահա թե Ասված ինչու աշխարհ բերեց Կոմիտասին. նա ծնվեց, որպեսզի հայ հոգեւոր ու ժողովրդական երգը հավերժ ապրի, Կոմիտասն ապրեց, որպեսզի հայ երգն ու երաժշտությունը զտվի օտարամուտ տարրերից, այն մաքրվի ու բյուրեղանա եւ տարածվի աշխարհի բոլոր ծայրերում, Կոմիտասն ապրեց, որ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներին ապացուցի, որ հայն ունի ինքնուրույն երաժշտություն, Կոմիտասն ապրեց, որպեսզի ապրեցնի ու հավերժացնի իր ժողովրդին ու նրա դարավոր մշակույթը: Ճիշտ է նկատված՝ երաժշտությունը միջազգային լեզու է, տիեզերական լեզու, որն առանց լեզվական արգելքների կարող է ներթափանցել մարդու (եւ ոչ միայն մարդու) ներաշխարհը, ոգեւորել ու ներշնչել նրան, ոգեշնչել ու մարտի կոչել, միաժամանակ հարսի ու փեսայի գովքն անել, ռանչպարի ու եզնախոզոր հետ խոսել, պանդուխտի բերանով կռունկից «խապրիկ մը» ուզել ու անտունիներին տուն կանչել:

Վերջապես Կոմիտասն այն մեծապաղանդ արվեստագետն էր, որ լույս աշխարհ հանեց հայ գեղջուկի ու աշխատավոր ժողովրդի հոգեւոր հարստության անսպառ գանձերը, նրա երաժշտական ճարտարապետությունը, նրա երաժշտական մանրանկարչությունը, նրա երաժշտական տաղերգությունը, եւ ինքն էլ եղավ այդ երաժշտության մարմնացումը, հայկական երգերի անմահ կատարողը եւ միաժամանակ այդ երգերի ուսուցանողը… Եւ ինչպես Մաշտոցը անճառելի ու անդրանիկ դասագիրքը եղավ մի ողջ ժողովրդի համար, այնպես էլ Կոմիտասը եղավ մեր ազգային մեծագույն երգահանը, եւ մեր երգը մկրտվեց նրա վերածնողի՝ մեծն Կոմիտասի անունով, ինչպես մեր այբուբենն է կոչվում նրա անմահ երկնողի, մեր առաջին ուսուցիչ ու գիտնական Մեսրոպ Մաշտոցի անունով:

Եւ այդ խոհուն ու պրպտող գիտնականը, այդ նրբազգաց բանահավաքն ու մեծապաղանդ կոմպոզիտորը լսեց ու նոտագրեց ավելի քան 4 հազար հոգեւոր ու ժողովրդական երգեր, պարերգեր, մանիներ ու քառյակներ, գրեց նաեւ հրաշալի «Պատարագը», բայց դժբախտաբար կարողացավ իր հավաքածի 10 տոկոսից էլ քիչ մշակել ու հղկել՝ իր ժողովրդի Գողգոթան անցնելու եւ այդ կրած տառապանքներից խելակորույս լինելու պատճառով:

Ինքնակենսագրությունից տեղեկանում ենք, որ Սողոմոն Գեւորգյանը ծնվել է 1869-ի սեպտեմբերի 26-ին Անատոլուի Կուտինա (Քոթահիա) քաղաքում կոշկակար ու Ս. Թեոդորոս եկեղեցու ձայնեղ դպիր Գեւորգի ընտանիքում: Նա իր՝ հրաշալի ձայն ունեցող ու երգեր հորինող ծնողների միակ զավակն էր:

Ծնվելուց 3 օր հետո մանչուկին մկրտում են Կուտինայի Ս. Թեոդորոս եկեղեցում, անունը կնքում են Սողոմոն. կնքահայրը հորեղբայրն էր՝ Հարություն Սողոմոնյանը, իսկ մկրտող քահանան՝ Տեր Ղազարոսը:

Երջանկացած երիտասարդ ընտանիքի ուրախությունը երկար չի տեւում. գուցե ի վերուստ փոքրիկին տրված չէր մայրական սերն ու գորովանքը երկար վայելելու, մայրական գորացնող կաթով ու երգով սնվելու՝ բնությունից շնորհված երջանկությունը, մանուկն այդ բոլորից զրկվում է վեց ամիսը չբոլորած: Երեխայի խնամքը մնում է հոր եւ հայրական տատի՝ անչափ բարի ու հոգատար Մարիամի վրա, ապա՝ հորաքրոջ:

Երբ լրանում է որդու 7 տարին, հայրը նրան ընդունել է տալիս իրենց քաղաքի չորսդասյան վարժարանը, այստեղ Սողոմոնը աչքի է ընկնում լավ սովորելով, զրնգուն ու քաղցր ձայնով, որը ժառանգել էր ծնողներից: Երբ փողոցի տղաները Սողոմոնին նեղացնում կամ ծեծում էին, նա ուներ ինքնապաշտպանության հրաշալի միջոց՝ երգում էր եւ դրանով ազատվում էր իր «թշնամիներից»:

Սողոմոնը երգում էր դպրոցում, փողոցում, տանը, ամենուրեք… Երգը նրա տարերքն էր:

Նորից ողբերգություն՝

Գեթ հայրը մնար… բայց հայրն էլ գնաց,
Երբ որդին չկար տասը տարեկան.
Իր ժողովրդի զավակն իսկական
Ժողովրդի պես նա էլ որբուկ մնաց

(Պ. Սեւակ)

Անապասպան որբուկն իր բախտը կապեց իր նման անտերունչ տղաների հետ ու մի կերպ հանգրվանեց տեղի Ս. Թեոդորոս եկեղեցում, հազավ ժամաշապիկ ու դարձավ դպիր, սիրեց հոգեւոր երգերն ու շարականները: Եկեղեցում նա փոխարինեց իր հորը:

Գեւորգ Դ Մեծագործ Կաթողիկոսը 1874-ին իր հիմնած հոգեւոր ճեմարանում սովորելու համար հատուկ կոնդակով որբ ու կարիքավոր 30 ձայնեղ տղաներ է պահանջում: Բարեգութ Ասպծո կամեցողությամբ բախտը ժպտում է նաեւ 12-ամյա Սողոմոնին:

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արեւ:
Շողարձակում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին քարեր,
Եւ Մայր Արաքս: Եւ Մայր Տաճար…
…Եւ ճեմարան՝ մտքի կաճառ:

Եւ ահա Գեւորգ Դ Կաթողիկոսի առաջ կանգնած է տասներկուամյա գունատ պատանին՝ ծղոտի պես բարալիկ, թոչունի պես երկչոտ՝ տաճկական կարմիր հալավով, պոչավոր մաշված սոլերով: Վեհափառի հարցերին մանչուկը չպատասխանեց. հայերեն չգիտեր: Իրենց քաղաքում հայերին խիստ արգելված էր մայրենի լեզվով խոսելը. թուրքերը հայերեն խոսողների լեզուն կտրում էին: Միայն եկեղեցում էին թույլատրում հայերեն երգել:

…Եւ տղան սկսեց… թուրքերեն երգել…
Բառերը հեղուկ… Ձայնը՝ զուլալ…

Իսկ երբ թուքերենին հաջորդեց «Լոյս զուարթ» շարականը, վեհափառի աչքերից արցունքներ գլորվեցին, եւ նա կարգադրեց տղային ճեմարան ընդունել՝ իբրեւ եզակի մի բացառություն:

Գեւորգյան ճեմարանի գիշերօթիկ սան Սողոմոնը դառնում է իր դասընկերների, ուսուցիչների եւ Վեհափառ Հայրապետի սիրելին: Վեհի հանձնարարությամբ պատարագների ու ժամերգությունների ժամանակ Սողոմոնը անպայման պետք է մոտիկ կանգներ հայրապետական աթոռին, որպեսզի Կաթողիկոսը մոտիկից լսեր նրա մաքուր ու քաղցր ձայնը, հատկապես «Լոյս զուարթը»:

Ճեմարանը Հայաստանի միակ կրթօջախն էր, որտեղ 9 տարվա համակարգված ուսուցմամբ տղաներ էին սովորում Վանից ու Տարոնից, Պոլսից ու Սիրիայից, Սուրմալուից ու Կիլիկիայից, Գողթան գավառից ու հնդկահայ գաղութից, ինչպես նաեւ ուրիշ շատ երկրներից: Ավարտելով ուսումը՝ նրանք դառնում էին ոչ միայն հոգեւորականներ, այլեւ բանասերներ, պատմաբաններ, փիլիսոփաներ, երաժիշտներ, նկարիչներ, ինչպես նաեւ քաղաքական գործիչներ: Նրանցից շատերն իրենց կրթությունը շարունակում էին Սանկտ Պետերբուրգում ու Մոսկվայում, Բեռլինում, Փարիզում ու Ծվեյցարիայում, եւրոպական այլ երկրներում:

Տարբեր երկրներից ու գավառներից ճեմարանում սովորելու եկած տղաներն իրենց հետ բերում էին ճակատագրով աշխարհով մեկ ցիրուցան եղած իրենց ծնողների ավանդույթներն ու սովորույթները, երգերն ու պարերը: Եւ այդ բոլորը Կոմիտասի համար անգնահատելի գանձեր էին: Իր դասախոսությունների տարիներին էլ Կոմիտասը հանձնարարում էր իր սաներին ամառային արձակուրդներից վերադառնալ «հարուստ ավարով»:

Մ. Աբեղյանի վկայությամբ Սողոմոնը դեռ 3-րդ, 4-րդ դասարանի աշակերտ էր, երբ ճեմարանի երգեցողության ուսուցիչ Մինաս Ազնավուրյանը նրան էր հանձնարարում հավաքել փղաներին ու սկսել երգչախմբի փորձերը կամ դասերը: Այդ տարիներին էր, որ Սողոմոնը «Լո-լո-լո» մեղեդու եւ Աբեղյանի գրած տեքստով ստեղծում է «Սիփանա քաջեր» հրաշալի երգը, որը դառնում է ճեմարանի ուսանողության քայլերգը, տարածվում է նաեւ Շուշիում, անցնում Եւրոպա:

1890 թ. հունիսին ուսանող Սողոմոնը ձեռնադրվում է սարկավագ եւ մտնում միաբանության շարքերը:

1892-ի մայիսի 5-ին Մայր Աթոռում մեծ եռուզեռ էր. կատարվում էր հայ եկեղեցու 125-րդ կաթողիկոսի ընտրությունը: Իր բացակայությամբ կաթողիկոս է ընտրվում հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական, քաղաքական ու կրոնական խոշորագույն գործիչ, ներհուն մտավորական ու բնաշխարհիկ գրող 72-ամյա Մկրտիչ Խրիմյանը, որին ժողովուրդը մեծարել է ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ պատվանունով:

Ամենայն Հայոց Հայրիկը առաջին իսկ ծանոթությունից սիրեց Սողոմոն սարկավագին, գերվեց նրա ձայնով, տարվեց նրա կատարած երգերով՝ «Ձայն մը չէր, ան հոգի մըն էր»: Եւ այդ ժամանակվանից էլ Սողոմոնը դառնում է Խրիմյանների ընտանիքի ամենապատվավոր անդամը եւ երաժշտությամ դասեր է տալիս Հայրիկի եղբոր որդու՝ Խորենի աղջիկներին՝ Կարինեին ու Սերինեին, որոնք հետագայում հրաշալի հուշեր են պատմում իրենց ուսուցչի ու անզուգական մարդու մասին:

Խրիմյան Հայրիկը որպես իր ճանապարհի ընկեր ու գավազանակիր միշտ իր հետ էր վերցնում «Հայոց սոխակին»: Նրանք միասին են եղել Թիֆլիսում, Շիրակում եւ այլուր:

1892-ի մայիսի վերջերին Սողոմոնը թույլտվություն է ստանում ծնողների շիրիմներին այցի գնալու եւ ծննդավայրից երգեր գրի առնելու: Հինգ ամիս նա իր ծննդավայրում այցելում է հարազատներին ու ընկերներին, մեծ թվով երգեր ու պարեղանակներ է գրի առնում. դրանց մի մասը իր ծնողների հորինած ու երգած երգերն էին: Նա երգեցողության դասեր է տալիս վարժարանի սաներին ու եկեղեցու երգչախմբին, միաժամանակ իր հարազատ եկեղեցում պատարագներ է մատուցում ու ժամերգություններ անում:

Վերադարձին նա Պոլսում հանդիպում է Հ. Ճանիկյանին, նրանից գրի է առնում Ակնա ժողովրդական բազմաթիվ երգեր ու «մեծ հարստությամբ» վերադառնում է Մայր Աթոռ ու նախապատրաստվում է ավարտական քննություններին:

1893 թ. մայիսին «Շնորհալին, նորա դարը եւ նորա ժամանակ հուզված կրոնական խնդիրները» ավարտաճառով եւ 15 առարկաների ավարտական քննությունների «հույժ գովելի» գնահատականներով ու վարքով ավարտում է ճեմարանը:

Նույն թվին էլ Խրիմյանի հրամանով ճեմարանի երգեցողության ուսուցիչ ու խմբավար Կարա Մուրզային փոխարինում է Սողոմոն սարկավագը: Ստանձնելով այդ պատվավոր ու պատասխանատու աշխատանքը՝ Սողոմոնը ջանք ու ջինք չի խնայում հիմնովին վերակառուցելու ճեմարանում դասավանդվող երգ-երաժշտության դրվածքը. նա զորացնում է երգչախումբը՝ վարժեցնելով քառաձայն կատարողական արվեստին. մի բան, որին հոգեւորական դասը դեմ էր՝ երգի բազմաձայն կատարումը անհարիր համարելով եկեղեցուն՝ պատճառաբանելով, թե միաստվածությունը պիտի փառաբանվի մեկ ձայնով՝ «Մեկ Աստ-

ված, մեկ ձայն»: Սողոմոնը ոչ միայն հիմք դրեց բազմաձայնության (պոլիֆոնիա), այլեւ երգչախմբին կից ստեղծեց ժողովրդական գործիքների նվագախումբ, որը հետագայում մեծապես նպաստեց ավելի լայն ծավալի եւ դասական ստեղծագործություններ կատարելուն: Հմուտ երաժիշտ-մանկավարժն առաջնորդվում էր նաեւ ռուսական ու եւրոպական դասական գրականությամբ դրանք Սանկտ Պետերբուրգից եւ Մոսկվայից պատվիրում ու ստանում էր իր սիրելի ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանը: Սողոմոնը շատ լավ գիտեր, որ երգչախմբում առանձնահատուկ եւ շատ կարեւոր դեր ունեն նաեւ մենակատարները, եւ նա իր երգչախմբի ձայնեղ պատանիներից պատրաստեց հրաշալի մենակատարներ, որոնք հետագայում փայլեցին նաեւ աշխարհի մեծ բեմերում: Դրանցից շատերը դարձան սիրված ու ճանաչված մենակատարներ, ինչպես օրինակ Արմենակ Շահմուրադյանը, Վահան Տեր-Առաքելյանը, Տիգրան Նալբանդյանը եւ շատ ուրիշներ: Նրա սաներից մի քանիսն էլ դարձան Կոմիտասի գործի շարունակողները՝ կազմելով նոր երգչախմբեր, ինչպես Միհրան Թումաճյանը, Բարսեղ Կանաչյանը, Վաղարշակ Սրվանձտյանը, Վարդան Սարգսյանը, Հայկ Սեմերջյանը եւ ուրիշներ:

1894 թ. սեպտեմբերի 11-ին ավագ սարկավագ Սողոմոն Սողոմոնյանը ձեռնադրվում է աբեղա եւ անվանակոչվում 7-րդ դարի նշանավոր կաթողիկոս, անվանի գիտնական, երգահան ու հրաշալի երգիչ Կոմիտասի անուով:

1895 թ. փետրվարի 26-ին Մկրտիչ Խրիմյան Վեհափառի հատուկ հրամանով Ս. Աստուածածին եկեղեցում Կոմիտասին շնորհվում է վարդապետական աստիճան եւ լանջախաչ:

Նույն թվի հոկտեմբերին երաժշտական կրթության մեջ խորանալու նպատակով Խրիմյան Հայրիկի խորհրդով Կոմիտասը մեկնում է Թիֆլիս՝ Ս. Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտած Մակար Եկմալյանին աշակերտելու: Եկմալյանը զարմանում է իր սանի արտասովոր ընդունակությունների եւ երաժշտական խորիմացության վրա: Յոթ ամսից հետո ուսուցիչը զգում է, որ այլեւ բան չունի իր սանին տալու եւ համոզվում է, որ Կոմիտասի նման երաժշտին պետք է դասավանդեն ավելի մեծ ու հմուտ երաժիշտներ, որ նրա տեղը միայն Բեռլինն է՝ իր նշանավոր կոնսերվատորիայով ու հռչակավոր երաժիշտներով եւ Կոմիտասին խորհուրդ է տալիս մեկնել Բեռլին:

Վերադառնալով Էջմիածին՝ Կոմիտասը Վեհափառին հայտնում է Եկմալյանի կարծիքն ու իր բուռն ցանկությունը: Վեհափառը, ընդառաջելով ապագա խոստումնալից երաժշտի ցանկությանը, դիմում է ազգային մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանին: Վերջինս անում է իր հերթական բարեգործությունը եւ 3 տարով ֆինանսավորում է Կոմիտասի ուսման ծախսերը Բեռլինում:

1896 թ. հունիսին Կոմիտասը մեկնում է Բեռլին: Տեղի հայ ուսանողների օգնությամբ մի էժանագին բնակարան է վարձում Կոխ փողոցում, վարձում է նաեւ մի դաշնամուր:

Իրեն տրված հանձնարարականներով 27-ամյա Կոմիտասը ներկայանում է Արքայական կոնսերվատորիայի ռեկտոր, աշխարհահռչակ ջութակահար ու կոմպոզիտոր Յոզեֆ Ռոահիմին: Անվանի երաժիշտը գերմանացու սառնությամբ քննում է պայծառ աչքերով իրեն նայող, պատասխաններով հավատ ներշնչող, ձայնային արտակարգ հնարավորություններ, լսողություն եւ երաժշտական փայլուն ընդունակություններ ունեցող ասիացի խոս-

գումնալից երիտասարդին եւ նրան գրանցում կոնսերվատորիայի առաջին կուրսեցիների ցուցակում՝ 6 տարվա ուսումնառությամբ: Քանի որ Կոմիտասը միայն 3 տարվա հնարավորություն ուներ, ռեկտորը նրան խորհուրդ է տալիս միաժամանակ սովորելու պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում՝ խտացված ծրագրով՝ սովորելով նաեւ եկեղեցական երաժշտության ճեմարանում՝ իբրեւ ազատ ունկնդիր:

Սկսվում են խիստ ծանրաբեռնված, լարված ու տքնաջան աշխատանքի տարիներ: Բեռլինի նման երաժշտական քաղաքը կլանում է Կոմիտասին ամբողջ էությամբ. նա բաց չի թողնում ոչ մի համերգ ու ներկայացում: Նա մոտիկից ծանոթանում է օպերային թատրոնի երաժշտական կոլեկտիվի ու արտիստական անձնակազմի հետ. հաճախ ներկայացումների ու համերգների ժամանակ երգում է կուլիսներում ու կապելլայում՝ մերթ որպես տենոր, մերթ որպես բարիտոն, երբեմն էլ նույնիսկ բաս՝ արագ յուրացնելով յուրաքանչյուր ձայնի պարտիան:

Բեռլինի երաժշտական-գիտական կյանքում Կոմիտասի կենսագրության մեջ կարեւոր իրադարձություն էր 1899-ի ապրիլին պրոֆ. Օսկար Ֆլայշերի նախաձեռնությամբ «Երաժշտական միջազգային ընկերության» Բեռլինի մասնաճյուղի ստեղծումը, որի 40 անդամներից մեկն էլ Կոմիտասն էր՝ միակ ներկայացուցիչը Կովկասից: Կոմիտասին հանձնարարվում է առաջիկայում զեկուցում կարդալ հայ երաժշտության մասին: Պատասխանատվության բարձր զգացում ունեցող վարդապետ-ուսանողի համար սպասվում են անքուն գիշերներ. ազգի արժանապատվությունը իր առողջությունից բարձր գնահատող մեծ հայրենասերը պատրաստում է մի հրաշալի զեկուցում եւ իր տեսական նյութը ավելի հասկանալի ու ներգործուն դարձնելու նպատակով նա հայ (եւ ոչ միայն հայ) ուսանողներից մեկ ամսվա ընթացքում կազմակերպում է մի քառաձայն երգչախումբ:

Նա իր երգչախմբով, բովանդակալից զեկուցումով, գերմաներենին տիրապետելու եւ իր հոեստորական արվեստով գիտաժողովի հարյուրավոր բարձրաստիճան երաժիշտներին համոզեց, որ «հայկական երաժշտությունն այնքան ինքնուրույն ու հարազատ է իր ժողովրդին, որչափ նրա՝ դարերի խորքից եկած լեզուն ու գրականությունը, որովհետեւ յուրաքանչյուր ազգի երաժշտություն տվյալ ազգի հնչյունական ելեւէջներց է սնվում»:

Կոմիտասն իր ելույթով ու երգչախմբով ոչ միայն համոզում, այլեւ հմայում է ներկաներին, մանավանդ, երբ իր զեկուցման ժամանակ դահլիճ է մտնում երգչախումբը՝ թնդացնելով

Արեւն ելավ, զեյթունցինե՛ր,
Դե ձի հեծնենք, դիմենք առաջ…

Դահլիճը շիկանում է ծափերից… Սկսվում են շնորհավորանքներ ու ձեռքսեղմումներ:

Համերգ-դասախոսությունը կրկնվում է մեկ ամիս հետո: Նորից նույն հաջողությունները. այս դեպքում՝ Բեռլինի հսկայական դահլիճներից մեկում: Հայրենասեր երաժիշտը շնորհակալություն է հայտնում հրավերների համար եւ ասում, որ ինքը պարտք ունի կատարելու ժողովրդի հանդեպ. պետք է վերադառնա Հոգեւոր ճեմարան եւ իր նման երաժիշտներ պատրաստի, որպեսզի նրանք էլ հայ երգն ու երաժշտությունը տարածեն աշխարհում: Այս մասին Կոմիտասը պատմել է իր մտերիմ ընկեր Հրաչյա Աճառյանին, որը նույն պատասխանն էր տվել Սորբոնի համալսարանում որպես պրոռեկտոր աշխատելու առաջարկին:

Այս երկու համերգ-դասախոսությունների վերաբերյալ ժամանակի գերմանական ու ֆրանսիական մամուլը բազմաթիվ դրվատական ու հիացական հոդվածներ է տպագրում՝ այն համարելով փոնահմբություն, որի նմանը մինչ այդ չէր եղել ոչ Բեռլինում եւ ոչ Փարիզում:

1899 թ. օգոստոսի 20-ին Կոմիտասը «Քրդական երաժշտությունը» թեմայով դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ ավարտում է կոնսերվատորիան: Նույն օրը նա ստանում է նաեւ Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցի ավարտման վկայականը: Միաժամանակ Կոմիտասն ստանում է նաեւ Արքունի համալսարանի փիլիսոփայության բաժնի ավարտական վկայականը, որի երաժշտափիլիսոփայության դասընթացներին հաճախել էր երկու տարի՝ որպես առկա ուսանող:

Մեկ ամիս հետո երաժշտական բարձրագույն կրթություն ստացած Կոմիտաս վարդապետը հայրենիքում էր՝ իր պաշտելի Մայր Աթոռում ու իր սիրասուն ուսանողների հետ: Նա Խրիմյան Հայրիկի թոռնիկների համար Բեռլինից դաշնամուր էր բերել: Ճեմարանում Կոմիտասն սկսում է աշխատել բոլորովին նոր ծրագրով. նա ոչ միայն Հ. Պարոնյանի կատակերգությունների համար երաժշտություն է գրում ու դրանք բեմադրում իր սաների ուժերով, այլեւ հատվածներ է կատարում եւրոպական կոմպոզիտորների լայնակտավ ստեղծագործություններից: 1899 թ. հոկտեմբերի 26-ին ճեմարանի բացման 25-րդ տարեդարձի հանդիսավոր երեկոյին նա իր 60 հոգանոց արական քառաձայն երգչախմբով (սոպրանոյի եւ ալտի պարտիաները կատարում էին ցածր դասարանների տղաները) ճեմարանի դահլիճում հատվածներ է ներկայացնում Վերդիի «Աիդա», Գունոյի «Ֆաուստ» օպերաներից, ինչպես նաեւ Բախի ու Շուբերտի ստեղծագործություններից՝ արժանանալով Վեհափառի եւ բազմաթիվ ունկնդիրների հավանությանը: Երեւանի քաղաքապետը, որը ներկա էր համերգին, խնդրում է նույնը կատարել Երեւանում: Մեկ շաբաթ հետո համերգը կրկնվում է Երեւանի Ջանփոլադյանի թատրոնի լեփ-լեցում դահլիճում:

Էջմիածնում Կոմիտասի բնակարանը դարձել էր Վերնատուն. գիշեր ու ցերեկ այստեղ էին հավաքվում ոչ միայն տեղի, այլեւ դրսից եկած բազմաթիվ մտավորականներ՝ Հ. Թումանյան, աշուղ Ջիվանի, Հ. Հովհաննիսյան, Վրթ. Փափազյան, Մ. Աբեղյան, Հրաչյա Աճառյան, հյուրեր նաեւ Եւրոպայից:

Այս շրջանում Կոմիտասը ձեռնամուխ է լինում «Անուշ» օպերայի ստեղծմանը, այդ նպատակով նա մեկնում է Թիֆլիս՝ Թումանյանի հետ խորհրդակցելու: Միաժամանակ նա սկսում է աշխատել «Սասնա ծռեր» եւ «Կարմիր Վարդան» իր ծրագրային գործերի վրա:
1901 թ. ամռանը Կոմիտասը հրավիրվում է Փարիզ՝ երաժշտական նորագույն ուղղություններին ծանոթանալու: Նա ծանոթանում է Արշակ Չոպանյանի եւ Մարգարիտ Բաբայանի հետ, սրանց միջոցով էլ բարեկամություն է հաստատում Կլոդ Դեբյուսիի, Մորիս Ռավելի, Սենսանսի, ինչպես նաեւ գեղանկարիչներ Մանեի, Մոնեի, Պիսարոյի եւ ուրիշ շատ արվեստագետների հետ: Կոմիտասը չի մերժում թե՛ քաղաքի եւ թե՛ մոտակա բնակավայրերի հայերի խնդրանքը՝ Պատարագ մատուցել հայկական եկեղեցիներում եւ համերգներ տալ նրանց համար:

1905 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում ասեղ գցելու տեղ չկար. Թիֆլիսի ողջ մտավորականությունն ու բազմաթիվ հյուրեր եկել էին ունկնդրե-

լու Կոմիտասի 60 հոգանոց ճեմարանական քառաձայն երգչախմբի համերգը: Ունկնդիրների խնդրանքով համերգը կրկնվում է ապրիլի 3-ին: Անդրկովկասի թերթերն ու ամսագրերը բառեր չէին խնայել մեծարելու փաղանդաշատ մաեստրոյին եւ գովասանելու նրա երգչախումբն ու բազմահարուստ ծրագիրը:

1906-ին Կոմիտասը նորից Փարիզում է՝ այս անգամ փարիզյան Հայկական երգ նվագահանդեսին մասնակցելու: Այստեղ Կոմիտասը Ա. Չոպանյանի եւ Մ. Բաբայանի միջոցով հայ եւ օտարազգի ուսանողներից քառաձայն մի հրաշալի երգչախումբ է պատրաստում եւ «Ազրիկուլտուր» մեծ սրահում փառահեղ շքեղությամբ մի համերգ է տալիս. որպես մեներգիչ փայլում է Արմենակ Շահմուրադյանը՝ իր արտակարգ ձայնով: Համերգի վերջում, երբ Կոմիտասը սրինգով նվագում է «Ոչխարի կանչը», Ֆրանսիայի երաժշտագետների կուռքը՝ Կլոդ Դեբյուսին, մոտենում է Կոմիտասին, ծունկի է գալիս, նրա փարաջայի փեշը հպում է շրթունքներին եւ բարձրաձայն ասում.

-Հա՛յր Կոմիտաս, խոնարհում եմ գլուխս Ձեր երաժշտական հանճարի առաջ:

Ապա դառնալով դահլիճում շունչները պահած ունկնդիրներին՝ հայտարարում է.

-Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական էր, որ նա համարվեր աշխարհիս մեծագույն երաժիշտներց մեկը:

Փարիզում Կոմիտասն իր համերգներն ու դասախոսությունները շարունակում է մինչեւ 1907թ. ձմեռը: Շքեղ համերգներ է տալիս նաեւ Սորբոնի հոյակերտ դահլիճում: Նա իր համերգ-դասախոսությունները շարունակում է նաեւ Ժնեւում, Ցյուրիխում, Բեռնում, Լոզանում եւ ստացված ողջ հասույթը ուղարկում է Վանի սովյալներին:

Մինչ շվեյցարական մամուլը իր բարի գործն էր կատարում, Կոմիտասը Արշակ Չոպանյանի հետ անցնում է Իտալիա՝ հայ երգն ու արվեստը ներկայացնելու եւ Մխիթարյանների հարուստ ձեռագրատանը հայկական խազերին եւ հայ երաժշտության պատմությանը ավելի մոտիկից ծանոթանալու:

Երեք շաբաթ ըմբոշխնելով Իտալիան իր գեղեցկություններով, իր գանձերով, համերգ-դասախոսություններով հանդես է գալիս Միաբանության դահլիճում, Մուրադ Ռաֆայելյան վարժարանում եւ այլուր, ապա Փարիզով ու Շվեյցարիայով վերադառնում է հայրենիք՝ համաշխարհային երաժշտական խաչմերուկներում հաղթանակած:

1907 թ. հոկտեմբերի 25-ին իր մահկանացուն է կնքում 87 տարեկան Խրիմյան Հայրիկը՝ գահակալելով 15,5 տարի: Վեհափառից հետո Կոմիտասի շուրջ ծայր են առնում ամբաստանություններ ու բանսարկություններ… Բանն այնտեղ է հասնում, որ Գեւորգ արք. Սուրենյանցը տասն անգամ կրճատում է Կոմիտասի աշխատավարձը՝ պատճառաբանելով, որ Եւրոպաներում շատ է լինում, ճեմարանում՝ քիչ:

1910 թ. մայիսին Կոմիտասը բուժվելու եւ նորանոր երգեր նոտագրելու նպատակով նորից ուղեւորվում է Բեօրրան: Ճանապարհին լինում է Բաթումում, Մախինջաուրիում, վրացահայ այլ բնակավայրում, հայկական ու վրացական երգեր է գրի առնում, համերգներ է կազմակերպում ու անցնում է Պոլիս: Այստեղ հանդիպում է իր սիրելի դաստիարակ Մաղաքիա արքեպս. Օրմանյանին եւ պատմում է Մայր Աթոռում իր նկատմամբ եղած վերաբերմունքի մասին: Բարեկամները խորհուրդ են տալիս գալ ու հաստատվել Պոլսում, որտեղ բնակվում են 100 հազարից ավելի հայեր եւ ունեն 28 հայկական դպրոց ու 32 եկեղեցի եւ մտավորականների մեծ փաղանգ:

Կոմիտասը իր ճեմարանական ընկեր Փանոս Թերլեմեզյանի հետ մի հարմարավետ բնակարան է վարձում, որտեղ միասին ապրում ու ստեղծագործում են 5 տարի: Նրանց բնակարանը դառնում է մի նոր «վերնատուն»: Այստեղ են հավաքվում Վարուժանն ու Սիամանթոն, Զոհրապն ու Սեւակը, Զարդարյանն ու Շանթը, Հ. Սիրունին, նշանավոր բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ, մանկավարժներ, դրսից եկած հյուրեր, նաեւ օտարազգի արվեստագետներ:

Պոլսում Կոմիտաս վարդապետը հսկայական գործ է կատարում. նա ցանկանում է այնտեղ հայկական կոնսերվատորիա հիմնել. այդ նպատակով հայկական դպրոցներից ու վարժարաններից ընտրում է 300 ուսդրեր ու դուստրեր, կազմակերպում է «Գուսան» երգչախումբը, սկսում անդադրում աշխատել՝ համերգներ տալու եւ ապագա կոնսերվատորիայի համար հիմնադրամ ստեղծելու նպատակով: Եւ «Գուսան» երգչախումբը մի քանի համերգ է տալիս, որոնց լայնորեն արձագանքում է մամուլը: Կոմիտասի համբավը տարածվում է ամենուր. հասնում է մինչեւ բուրգերի երկիր: Ստացվում են բազմաթիվ հրավերներ ամենատարբեր երկրներից…

Եւ ահա Կոմիտասը Եգիպտոսում է. 1911-ի ապրիլի 10-ին՝ Ս. Զատիկի օրը, Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատարագիչն էր: Ալեքսանդրիայում նա 190 հոգուց բաղկացած երկսեռ երգչախումբ է կազմում եւ անմոռաց համերգներ տալիս եգիպտահայության համար: Կահիրեում տված նրա համերգներից մեկի մասին Տ. Կամսարականը գրում է. «Ով ըսաւ, թէ լեռները չեն քալեր… Դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս. քիչ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերուս…»: Այդ համերգի վերջում Կոմիտասը ոսկե շղթա, ոսկե մատիտ եւ ոսկե դրամապանակ է ստանում: Արաբական մամուլը չլսված ու չգրված խոսքեր գրեց հայ երգի ու նրա անման կատարողի մասին. «Հանձին Կոմիտասի ողջունում ենք այն մեծ առաքյալին, որով կարող է հպարտանալ ոչ միայն հայ ժողովուրդը, այլեւ ողջ Արեւելքը…»:

Ճիշտ է, Պոլսում Կոմիտասը ազգօգուտ գործեր շատ էր անում, բայց Պոլիսը հայրենիք չէր. այն խորթ ու օտար էր հայր սուրբի համար. նրան կանչում էր մայր հողը, Մայր Աթոռն ու խազերի լրիվ վերածումը: Վերջապես նա կարոտել էր իր ընկերներին ու սիրելի սաներին… Ու նա վերադարձավ Մայր Հայրենիք… Ու նրան լավ չընդունեցին… Գեւորգ Հինգերորդի այն հարցին, թե ե՞րբ ես եկել, ե՞րբ ես վերադառնում, խիստ վիրավորված Կոմիտասը պատասխանեց՝ «Այսօր եկա, վաղը կգնամ»: Եւ Կոմիտասը, իրեն խիստ նվաստացած զգալով, թողեց իր այնքան սիրած, իրեն կյանք ու կրթություն տված սրբազան երկիրը եւ ճարահատյալ վերադարձավ Պոլիս: Նա տքնաջանորեն նախապատրաստվեց հայ գրերի գյուտի 1500 եւ հայ գրքի տպագրության 400-ամյա տարեդարձներին կազմակերպվելիք տոնահանդեսին: Այդ շքեղ տոնահանդեսը տեղի ունեցավ 1913-ի հոկտեմբերի 13-ին Պոլսի Պըտի Շան թատրոնում, որին հայ մտավորականների ու բազմաթիվ հյուրերի հետ մասնակցում էին նաեւ Թալիաթն ու Ջեմալը (երկուսն էլ կեղծավոր ելույթներ ունեցան): Նիստը նախագահում էր Կոմիտասը: Այն ավարտվեց «Գուսան» երգչախմբի աննախադեպ համերգով:

1914 թ. հունիսին Փարիզում կայացավ Միջազգային երաժշտական ընկերության հերթական համագումարը, որին մասնակցում էին քաղաքակիրթ երկրների ավելի քան 400 մասնակիցներ: Մերձավոր Արեւելքի երկրներից մասնակցում էր միայն Կոմիտասը: Նա նո-

ից առաջին կարգի մրցանակ շահեց: «Կոմիտասը իր երգով նվաճեց Փարիզը»,- գրեցին աշխարհի թերթերն ու ամսագրերը: Կոմիտասը մի քանի դասախոսություններով ու համերգներով հանդես եկավ ոչ միայն Փարիզի, այլեւ արվարձանների հայկական եկեղեցիներում ու դահլիճներում: Նրա հետ էին Ա. Զոպանյանը, Մ. Բաբայանը եւ Գրանդ օպերայի մենակատար Արմենակ Շահմուրադյանը:

Վիեննայում եւ Ֆիլիպիններում համերգ-դասախոսություններից հետո Կոմիտասը հաղթանակած վերադարձավ Պոլիս: Փառահեղորեն դիմավորեցին Եւրոպան բազմիցս նվաճած, իր ժողովրդի վարկն ու հեղինակությունը աշխարհով մեկ տարածած աշխարհահամբավ ուսուցչապետի վերադարձը:

«Գարուն ա, ձուն ա արել»… Եւ 1915-ի ապրիլի 24-ին մղձավանջային գիշերը մեկուկես միլիոն հայերի համար չունեցավ լուսաբաց…

Գիշերվա ուշ ժամ էր, Կոմիտասն աշխատում էր մոմի լույսի տակ: Ներս են խուժում երկու ոստիկան, տակնուվրա են անում սենյակը, պատառոտում ու հատակին են շպրտում սուրբ մասունքները… Կենտրոնական բանտի բակում Կոմիտասը հանդիպում է գրեթե իր բոլոր ընկերներին՝

Եւ այստեղ էին նրանք… Վարուժանը խոհուն,
Սիամանթոն՝ հայացքն ուղղած դեպի երկինք...

…Եւ տառապանքի քարքարոտ ու փոշոտ ճանապարհը վախճան չուներ… ամենուրեք ահասարսուռ ու հոգեցունց տեսարաններ, որոնք չէին կարող չազդել այնքան նուրբ սիրտ ու հոգի ունեցող Կոմիտասի վրա՝

Դե, ե՛կ Վարդապետ ու մի՛ խենթանա…

Ու ցնորվեց վարդապետը եւ այդպես «ապրեց» 20 տարի՝ նախ Պոլսի հոգեբուժարանում, ապա՝ Փարիզում: Նա խռոված էր աշխարհից ու մարդկանցից, չէր ընդունում նույնիսկ իր բարեկամներին ու սիրելի սաներին: Մեկ-մեկ էլ խոսելիս հարցուփորձ էր անում Հայաստանից, հայ ժողովրդից եւ իր սիրելի սաներից:

Հայ երգի վեհափառը, հայոց երգի սոխակը, հայ երգը աշխարհով տարածող, իր ազգին ու երկրին փառք ու պատիվ բերող վարդապետը իր մահկանացուն կնքեց 1935-ի հոկտեմբերի 21-ին, ժամը 6-ին՝ իր սիրելի հայրենիքի ու ազգի կարոտը սրտում: Հոգեհանգստի շքեղ արարողությունը կատարվում է Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու մուտքի առաջ. իրար են հաջորդում դամբանականներ, հիշատակի ու հրաժեշտի խոսքեր, աղոթքներ ու երգեր… Եւ Կոմիտասի ապակեպատ զմռսված դագաղը իջեցվում է եկեղեցու նկուղ՝ հարմար առիթով Հայաստան տեղափոխելու սպասումով:

1936-ի մայիսին հավերժական ճամփորդը վերադառնում է իր վերջին հանգրվանը եւ հուղարկավորվում իր սիրած Մասիսների ու Արագածի հովանու տակ:

Խոնարհվեց հայ երգի հսկա կաղնին, բայց նա հավերժ կապրի իր ժողովրդի հետ եւ կինչի հավերժ որպես ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՐՆ: